



# ԲԱՂՄԱՎԵՊ

ՈՅԹԳ · 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՕԳՈՍՏՈՍ

Ն Ե Տ Ո Դ Ա Բ (Ի ՀԱՅԱ)

(ՏԵՍ ԱԿԻՂՔԸ ՀԵՐԵՍ 193 :)

**Թ**ուրիք ազգն որյետ ամենայն սկիւթական ազգաց հասաւ նախիշխանութեան և գերազանցեց քան զամենքն, թէ ընդարձակ թէ երկարատև աշխարհակալութեամբ և թէ քաղաքակրթութեամբ, ինչպէս՝ ի սկզբան ըսկ՝ ի հնուց առանձին զատ ազգ մը չէր ճանչյուած, այլ շատ զատանուն ազգք կամ ցեղք միանգամայն սեպուէին Սկիւթացի կամ թուրք : Հին պատմաց կամ աշխարհագրաց մէջ ե գարէն առաջ այս անունս որոշ գրուած չի գտուիր, այլ մօտ կամ ծռած ծերած հնչմամբ մը . մինչև անկէ գրեթէ հազար տարի առաջ երդուառոսի յիշած Սկիւթացւոյ նախահայր Տարգիտաւն այլ՝ բանասէլք ճանհնան թուրիք կամ թուրգում<sup>1</sup> : Ըստ արևելա-

գիտաց՝ Հնդկաց հին սանսկրիտ լեզուով գրոց մէջ թուրուքա կոչուի այս ազգս : Զ գարէն ինչուան ժ գար՝ աւելի կամ պակաս ծանուցեալ և յիշեալ է թուրք ազգն . իսկ անկէ (ժ գարէն) ետև քաջածանօթ եղած՝ իրու աշխարհակալ ազգ մը, և յետ ժԴ գարու իրու առաջին և տիրող ազգ արևմտեան Ասիոյ : Բայլ է որ այս թուրք ազգս՝ աշխարհիս ամենէն հին, նշանաւոր և բաղդասահաման ազգաց մէկն է, և որուն բաղդին կամ սահմանին ծայրն դեռ անծանօթ է, ինչպէս նաև իր իշխանութեան տակ ընկած շատ ազգաց այլ : Նման այն գետոց՝ որոց հեռաւոր ակունքը ծանօթ,

ՀՃին արևելակողմը, զոր արևելագէտը սահման ըստուգաբաննեն : Թուրքը ինչպէս իրէնց՝ այսպէս այլ հայոց նահապէտ ճանշնան զթորգում, անոր համար այլ զմեզ և զիրենք հօրեղբօրդիս անուաննեն :

<sup>1</sup> Բաշխտ մեծ պատմիչ Թաթարաց ՚ի ժԴ դարու յիշէ թուրքում անուամբ երկիր մը Պայքալ

միջին ընթագրն ծածկուած կամ անորոշ մնան . և շատ մանր վտակներ՝ որ անոնց մէջ թափուին կամ անոնցմէ ելնեն՝ կարծուին թէ այն մեծ զետն են, և անոր անունը կ'առնուն . բայց ինքն գետն յետ երկար սահմաններ անցնելունորէն հեռու տեղ մը՝ ի յայտ կու դայ հզօր և լայն, և անկէ ետև ամենուն յայտ յանդիման յորդաստահ կ'երթայ ու կ'երթայ :

Թուրքաց բնավայրն ուր ըլլալն ըսի առաջ և ինչպէս կոչուին . նոյնպէս յիշեցի որ թուրք.ք., խաղիղք և չեփթաղք ստէպ շփոթին իրարու հետ ՚ի պատմքաց . անոր համար թէ և Զ-Փ դարուց մէջ շատ հեղ յիշեն նորա զթուրքս , բայց չեմ զիտեր կամ չեմ ուղեր այսօր մանր պրպլտել թէ անոնցմէ ո՞րն բուն թուրք և ո՞րն օտար է . հաւանականն այս է որ ՚ի հնուց ժամանակաց թուրք.ք առանձին ցեղեր և ժողովուրդներ բաժնուեին , և զանազան խաներ և խաքաններ ունեին , երբեմն ինքնազլուխ , շատ հեղ մէկու մը գերագոյն իշխանութիւն ճանչնալով , որ և խաքանաց խաքան կամ Մեծ Խաքան կոչուեր . երբեմն այլ բոլորն մէկտեղ ուրիշ մերձաւոր հզօր ազգի մը հարկատու կամ հպատակ սեպուեին , ինչպէս էին խաղիղք և չեփթաղք , (եթէ այս ետքիններս այլ չեն թուրքի կամ թաթարի խառնուրդ) . որոց մերձաւոր են , թէ ոչ նոյն այլ ձուռաեւը կամ ձուանձուանք , և թուին ձուռաքն յիշեալք ՚ի մերոցնախնեաց , որոց տիրեցին թուրք.ք ՚ի կէս Զ դարու :

Թուրք.ք իրենց միջին զարուց ատեն՝ (՚ի Զ-Փ դարս) , Ուրալ գետէն ինչուան ՚ի Դիպէթ և ՚ի բնիկ թաթարս տարածուած սեպուին զանազան ցեղերով , որոց զլխաւորքն կամ մեզի ծանօթագոյնքն են՝ այս յիշեալ միջոցիս (թէ և ոչ ամենքն այլ մէկ ատեն) , սկսեալ ՚ի հիւսիսոյ արևմտից՝ (ուսկից և սկսան իրենք ծանօթանալ արևմտեայց) , նախ Ուրալ գետոյն վերին կողմերը թափառող Պաշիւրք՝ զորս համարեցանք մեր աշխարհապրին ըսած ահաւոր Բուշի

ազգը : յետոյ նոյն գետոյն՝ (զոր արևելայք Եայրք կամ Եայք կոչեն) վարի կողմերը և նաև անոր ու Վոլկայի միջոց՝ Փաչէնէքք , զոր մերայինք և Բիւզանդացիք և այլք կոչեցին Պահճինեկ , Պիհենակ և այլն . և ըստ ոմանց նոյն են ասոնց հետ կամ մերձատոհմք Գանքարլը կոչուած թուրք.ք : — Ուրալի բերնին արևելակողմը , որ է ըսել կազբից ծովուն հիւսիս-արևելեան կողմը զանազան ցեղեր պիտի ըլլան՝ յորոց յիշեն Արաբացիք յ'թ դարու զիտքէջ և թէրքէջ : — Կազբից ծովուն և Արալայ ծովալճին միջոց ամենէն նշանաւոր ազգատոհմն է Ղուզ կամ Օղուզ կամ Կուզ բառուածն , որ մերոց և արևմտեայց ծանօթ է Ուզ անուամք , որը և ըստ ընթացից Սիհունի՝ երեք տոհմ զատուէին , ՚ի Վերին , Միջին և Ստորին . բնական կազմուածով քան զուրիշ տոհմակիցա խրեանց պատիկ կամ կարճահասակ էին , այլ ուժով երբեմն գերազանցեցին քան զամենքն , ինչպէս յետոյ տեսնես : Ասոնց մերձատոհմ կամ սերունդ թուին իշգակք . որ մինչև հիմայ ծանօթ են հոն : Ընդհակառակն իրենց սահմանակիցքն՝ ՚ի հարաւոյ արևելից՝ Գարլուքք՝ ամենէն մեծահասակք և զօրաւորք սեպուէին , միանգամայն և նախեցիսանք , զի ասոնց էր խաքանաց խաքանն . և թերեւս ասոնց խաքանն էր իշխող ուժ խաքանաց՝ Արսիլաս անուն (Արալան ? ) յիշեալ՝ ՚ի Բիւզանդացւոց յամին 580 : Ասոնց մեծ տէրութիւնն տեսց ինչուան ՚ի ԺԲ դար , յորում Զիւնաց զրակից Խիթան աշխարհին տէրն անկէ հալածուելով՝ եկաւ տիրեց այս թուրքաստանի կեղրոն երկրին և անուանեց Գարա-Խիթայի . դար մը վերջը ձինկիզ խան նուածեց զայս այլ : Բուն և առանց ուրիշ անուան յիշեալ թուրքքաց հզօր տէրութիւնն՝ Զ դարում կիսէն մինչև ը դարուն կէսը քշած է , յորում նուածեցին զանոնք՝ իրենց հիւսիսային արևելակողմի բնակիչ թուրք.ք : Ասոնց հիւսիսակողմը թուի Քիմաք ըստած ցեղն . և հարաւակողմն կամ դէպ յարևելս մեծ ցեղն Ուզուրք , խնամի

Հուզաց, որ և ցարդ յիշուին։ Դար մը ետև զասոնք այլ նուածեցին իրենց հիւսային արևելեան կողմերը բնակող և ինչուան հիմայ հոչակեալ Խլրուրգք յիշեաք 'ի Զ դարէ . որոցմէ վար 'ի հարաւակողմն էին այն Դակաղկազ տոհմն՝ որոց մայրագաղաքը յիշեցինք Քուշան կոչեալ, որով և խառնուին ընդ Հեթաղաց և ընդ սահմանս Դիպէթ աշխարհի։

Արդ այս ամենայն ցեղից երկրին՝ որ մեծաւ մասամբ անապատ է, հիմայ հիւսիսակողմը բոնած են Խըրզրգք զանաղան ցեղեր բաժնուած . աւելի վերնակողմն այլ Ռուսաց Օրէնպուրկի և ուրիշ նահանգներուն մէջ բնակին Խազախք . իսկ վարի (հարաւային) կողմն է Խուարէզմ (հանդերձ Խուար անապատիւ) և Պուխարայի իշխանութիւնը . արևելակողմն այլ Թաթարաց մնացեալ իշխանութիւնք :

Դառնալով առ յիշեալ ցեղս Թրքաց, ասոնցմէ հեռագոյնն և արևմտագոյնն Փաչէնէք՝ բնապէս առաջին ալ եղաւ 'ի ծանուցեալ և քաղաքավար աշխարհս մոնելու և բնակելու . Թ դարուն կիսուն արդէն ոչ միայն Վոլկա զետն անցած էին այլ և զՃներեր, և արդէն Արգախու ծովեղերգը բոնած ինչուան Դանուբայ կողմերը տարածուէին . իրենց առջևէն քշելով ինչուան Դանուբայ բերանը զԲւեգուր Հոնաց ցեղը, որ առաջնորդութեամբ Արբատայ հաստատեց Մաճառաց տէրութիւնը . բայց իրենք այլ հալածուելով յՈւշուր ցեղէն, և յետոյ (894) յՌւգաց՝ օգնութեամբ Խազրաց՝ քշուեցան ինչուան իրութայ և Սերեթայ հովիտները, Երթալով մօտեցան Բիւղանդացւոց սահմանաց . և իրեւ բաւական ուժով տէրութիւն մը շատ հեղանոնց դաշնակցելով՝ օգնական եղան ընդդէմ այլոց Թուրքաց և Խազրաց և ուրիշ պատերազմներու մէջ . Երբեմն այլ ասոնց և Ռուսաց հետ զՅոյնս նեղէին մինչև ԺԱ. դարուն վերջերը . յորում Ռւգը բոլորվին նուածեցին զՓաշէնէքս, ինչպէս նաև զխաղիրս, և տիրեցին գրեթէ բոլորը վայրից յիշարին անուամբք :

բայ միջոց՝ դէպ 'ի կովկաս և 'ի Սև ծով սփոելով : Յետին յիշատակ Փաչէնէկաց առ պատմիչս մեր համանի 'ի սկիզբն ԺԲ դարու, (1408), յորում Գող Վասիլ ասոնցմէ գունդ մը տուաւ յօգնութիւն Պալտուինայ կոմին Ռւոհայու : Իսկ առաջին յիշատակ հզօր ցեղին Ռւգաց կ'ընէ պատմիչն Մեսրովլպ, Երբեւ ընդ այլոց սկիւթական ազգաց Հոնաց և Մազդթաց՝ Պարսից օգնական ընդդէմ Հայոց՝ Զիրաւայ դաշտին մեծ ճակատամարտին մէջ յամին 370 . բայց եթէ այն ատեն չէ՝ յայտ է որ պատմին ատեն 'ի Ժ դարու ծանօթ էր Ռւգն, զոր յաջորդ դարուն մէջ շատ հեղ յիշէ և Մատթ . Ռւոհայեցի, դեռ իրբեւ Պածինեկաց հետ նիզակակից : Ռւգաց իշխանութիւնն ԺԱ և ԺԲ դարուց մէջ զօրացաւ և տիրացաւ մինչև 'ի բռնանալն Թաթարաց, և արևմտեայց այլ ծանօթացաւ, թէպէտ և պէսալէս անուամբք . վասն զի շատր 'ի միջին դարու կուրման անուաննեն զանոնք, ինչպէս մեր Հեթում պատմիչն այլ, որ և վկայէ թէ շատ սպառագէն զօրք ունէին, և տարածեալ տիրէին կազրից և Պոնտոս ծովուց միջոց՝ կովկասայ ստորոտը լայնասիւլ տափարակ Երկրին, ուր 'ի Քուպան Գետոյ առին այդ անունը (կամ տուին անոր) . Երկրին այդ բնութեանն համար Ռուսք անուանեցին զասոնք Բուրնից, այսինքն Դաշտային կամ դաշտաբնակ . զնոյն նշանակէ (խոպան գետին) չէղաղայի Թուրքը լեզուաւ Քափչաք անունն՝ որով կոչին սոքա . և զոր ԺԲ դարու պատմիչք մեր գրեն Ղրշախս, Ղվչաղ, Խվչախք, և ստուգաբաննեն 'ի Վրաց լեզուէ Զոր-աման ըստ Միխայելի Ասորւոյ, « զի իսին ձոր » ասի, և չախն աման . որպէս թէ յամանի կան 'ի ձորս (կովկասայ), և ըստ « պիտոյից հանեն 'ի ժամանակս ժամանակս » : կ'իմացընեն այլ թէ առաջ այն Երկիրն կ'ըստէր Դաշտ Խազրաց, ինչպէս իրենց ատեն 'ի Ցաճկաց այլ Տէղդի Քլիչաք . իսկ աւելի առաջ ըստ Մտեփանստի Ռւոպելեանց կոչուէր Աշխարհ Խայլանդիացւոց, զոր յիշէ հին

հեղինակ մեր Եղիշէ։ Արդ Ռւզբեկու մանք-Քափչաքք նուաճելով զխազիրա խառնուեցան անոնց հետ։ Նաև ըստ Միխայելի՝ ոմանք քրիստոնեայ այլ եղան, և կ'օգնէին Հայոց և Վրաց։ Ուստի էին բուն մեծ և միջին մասն աղջին, որոց տիրեց՝ ի կէս ժֆ դարու Պայտու խան որդի Օխադայի որդւոյ ձին-կիզ-խանի, և անկէ ետև թալթարաց անցաւ սկիւթական տիրապետութիւնն։ յորոց հալածեալքն այս տեղէն՝ գացին իրենց արևմտեան ցեղակից եղբարց քով, որը Պածինեկաց տեղը բաներ էին և մինչև 'ի թրակիա սփռէին։ ոմանք այլ անցան գնացին ինչուան Ռւնկարաց երկիրը (Մաճառք), որոյ համար ասոնք այլ կումանք կ'ըսուէին։ իսկ մէկ մասն այլ Ռւզաց՝ մուացեր էր միշտ իր հին բնաշխարհին մէջ յարևելս, խուարէզմի և ձիհունի սահմանները, և պահէր իր հին անունը։ որ ըստ աւանդութեան նոցա ծագեալ է յօլուզայ՝ որդւոյ Գարա-խանի (իբրև վեցերորդ 'ի Նոյայ նահապետէ)։ որը և դարձեալ կ'ըսեն անոր համար՝ թէ իր ազգականաց հետ կոռուելով վասն աստուածպաշտութեան իրեն հասակակիցները անուանեց Ռէյ-կուր, այսինքն օժանդակ, օգնող։ և անկէ ծագեցաւ Ռէյկուր ցեղին անունն։

Ռւզաց մէկ մասին գէտ յարեմուտս երթան թուի թէ իրենց դրացի ցեղերէն նեղուելուն համար եղած է. և մուացեալքն հարկաւ աւելի տկարացան. և յ'թ դարուն ուրիշ շատ ցեղից հետխազրաց ինքնակալութեան տակ ընկած էին։ Այս ատեններս Ղուզաց դիմաւոր ցեղապետաց մէջ անուանի էր Տէգագ կամ թոքմաք, որ և ըստ աւանդութեան 33<sup>ր</sup> էր յէֆրասխապայ Թուրանի (Սկիւթիոյ) հսկայ թագաւորէն, (որ հին Պարսից քաջաց դիմամարտն էր)։ Խաղորաց բէկին կամ խափանին այլ մեծ իշխաններէն մէկն. որ կոչուէր ևս թէ մնար-Պալիդ, այսինքն երկարապինի, երկաթածայր նետ կամ երկաթակապ աղեղ լաւ գործածելուն համար, (որ ըստ մեր ոճոյ ըսելու էր հաստաղեղի կամ հաստահիզ աղեղնաւոր)։ սա է

նախահայր առ մեզ նախագուշակեալ կամ համբաւեալ աշխարհաւեր նեծողաց : Աղեղանը պէս խստասիրտ կամ մեծափառ ըլլալով՝ գժտեցաւ խազրաց խափանին հետ և կ'ուզէր զլուխ քաշել . բայց միջնորդութեամբ բարեկամաց դարձեալ հաշտեցաւ և պատիւ գտաւ 'ի խափանէն։ մինչեւ սա անկէ ետև Տէգագ զագայ ծնած Սէլչուկ որդին իր արքունեաց մէջ մնուցանել տուաւ, մանաւանդ որ քիչ ատենէն Տէգագ մեռաւ, և Սէլչուկ անուանեցաւ զօրավար : Սա տեսնելով որ արքունի իշխանք վրան նախանձին, ինքնակամ թողուց արքունիքն այլ<sup>1</sup> և եկաւ (յամի 956 կամ 964) Սմրզանտայ և Պուխարայի կողմերը, ու բնակեցաւ 'ի ձանդ։ Հոսմահմէտական կրօնքն ընդունելով<sup>2</sup>, սկսաւ ոչ միայն պաշտպանել կրօնակիցքը այլ և հալածել նեղել այլահաւատները, և իրեն կողմնակից շատցընել, որպէս զօրացաւ և աթոռը հաստատեց 'ի Պուխարա . ուր և մեռաւ ԺԱ դարուն սկիզբները (ըստ ոմանց յամի 1020) 107 տարուան։ իրմէ առաջ թերդ մը պաշարելու ատեն մեռեր էր իր անզրանիկ որդին Միքայէլ, երկու կորիճ թողլով, Զադրի պէկ և Տօղրուշ պէկ, զորս մեծցուց և կրթեց պապերնին։ Յետ անոր մահուան՝ երկու եղբարքն միաբանք և միասիրաք սկսան աշխարհակալութեան, և շատ պատերազմներով հալացին զԱլդէկին կամ իշխան Սմրզանտայ : Ըստ վկայութեան բազմաց՝ Մահմուտ Սապըքէտափին (Սէպէքթէկին)

<sup>1</sup> Մէր Կիրակոս պատմիչն Սէլչուկեանց բնավոյը կ'անուանէ «Սղնախն՝ որ է Խարջուիւլեան», «յորմէ Սալուիիքն են»։ Խոկ Միխայէլ Ասորի կ'ըսէ յամին 717 «Ելն Թուրքք յէրկին Արմեն» Ա. այս եղև սկիզբն ելից Թուրքաց»։ Ուրիշ տեղ կ'ըսէ թէ յԱրազայ աշխարհէն՝ որ 'ի սահմանս Պարսից Ելան Սալուկեանք բռնադատեալք 'ի Մահմուտ Սուլտանէ։

<sup>2</sup> Այս ատեններս ուրիշ Թուրք իշխան մ'այլ ձիհունի և Սիհունի միջոցէն՝ Սաւէս կամ Սէբէէ՝ մահմէտական կրօնքը ընդուներ էր, և իր նախնեաց սովորութիւններէն քիչ մը հեռանալովն՝ իր հետեւողքն և ազգն՝ Թիւրքէն կոչուեցան, այսինքն Թուրքի նաման։ և ասոնցմէ մաս մը Խուտրէզմի մէջ բնակեցաւ, մաս մ'այլ անցնելով յարկամուտս և կաւ 'ի հայաստան։

Ղաղնեւեան սուլտանն հրաւիրեց զա-  
նոնք ձիհունը անցնիլ և խորասանի  
սահմանները գալ, թէ և շուտով զզջա-  
ցաւ՝ տեսնելով անոնց ուժը. ոմանք այլ՝  
(որ այնքան հաւանելի չէ) բռնի և զե-  
րութեամբ բերաւ կ'ըսեն զանոնք:

Այսպէս աւանդեն և մեր Միխայել  
Ասորին, և Վահրամ Տիգրանայ որդին  
կամ Տիգրանակերտցի պատմիչ մը (առ  
Վարդանայ). այլ ստուգագոյն ևս Միխ-  
թար Անեցին, որ «Յոլով աշխատ եղէ,  
» կ'ըսէ (առ Վարդանայ) գտանել զոր-  
» պէսն սուլտանացն՝ որ 'ի թուրքաց,  
» և գտի Հնորհօքն Աստուծոյ այսպէս.  
» Մահմուտն զոր ասացաք՝ Մաքթանայ  
» որդի . . . 'ի գնալն յօդնականութիւն  
» ազգին՝ որոց գլխաւորն կոչիւր Խորը-  
» ղան Պօղրղան (այսինքն Գատըրիսան  
» որդի Պօղրախանի, տէր Քաշկարայ,  
» զոր նեղէր իլէկ խանն), 'ի ճանապար-  
» հին պատահէ բազմութեան ինչ թուր-  
» քաց (Սէլճուկեանց), և 'ի գառնալն  
» նոյն ճանապարհաւ՝ մեծաւ յաղթու-  
» թեամբ, առեալ զամիրայն նոցա զԱ-  
» փաղու (որ է թէկ կամ Բայզու որդի  
» Սէլջուկի), բերէ 'ի Խորասան և զնէ  
» 'ի կապանս. և ազգ նորա (Եղրարքն և  
» Եղրօրորդիկը) եկեալ խնդրեցին . . . և  
» ոչ ետուն: խակ նոցա բարկացեալ ան-  
» ցին ընդ Զահան՝ ամենայն բանակարն  
» իւրեանց, և զանձինս 'ի մահ եղեալ  
» կոռուցան և յաղթեցին, և առին զՆշա-  
» ւորն, և կոտորեցին զզօրս Սուլտա-  
» նին 'ի Դադանղանն մօտ 'ի Մրմն . . .  
» խակ յառաջադէմն 'ի թուրքացն՝ ո-  
» րում անուն էր Մուսէ Աղոյ (Մու-  
» սա թէկ) Սարչոքեայ որդի, ունէր  
» հինդ Եղրօրորդիս, որոց անուանքն  
» Արուսալիմ, Դաւութ, Չաղրբէկ, Ա-  
» րուտալիփ, Ցօղրիլ թէկ, որ և առ զիշ-  
» խանութիւն սուլտանութեանն » , և  
այն: (Ըստ Վերոյդրելոց՝ Զադր և Ցօղ-  
րիլ որդիք են Միքայելի մեծ որդւոյն  
Սէլջուկայ):

Ոչ այս պատմիչներս (Միխթար և  
Տիգրան) գտուին այսօր, և ոչ անոնցմէ  
հինն և մեծ իմաստասէր գրիչն Յովհան-  
նէս Սարկաւագ, որ նոյն բաները քըն-

նութեամբ զրեր էր, և որոյ քանի մը խօսքն  
մնացեր է (առ Սամուելի Անեցւոյ).  
« Մկիւթական ազգաց՝ ոչ հելենախո-  
» հիցն այլ բարբարոսացն՝ եղեալ մուտ  
» յաշխարհս, որպէս ասեն, այսպիսի  
» պատճառաւ. զյոլովս նուածեալ ազինս  
» որ յայնմ ժամանակի թագաւորին . . .  
» և կրեալ ապա զընդդիմութիւն 'ի  
» Հնդկականացն՝ ոչ սակաւ ժամանակս,  
» հրաւիրեն յոգնառատ խոստմամբք  
» պարգեաց զխուժադուժմն 'ի մար-  
» տակցութիւն. և մարտուցեալ նորօք  
» ժամանակ ինչ ընկրկէր (Մահմուտ)  
» զապատամբն. և զի կամէր միւս ան-  
» գամ գումարել 'ի մարտ՝ անդրէն դառ-  
» նալ արգելոյր զեկեալմն. և 'ի լինել  
» պատաղմանն՝ լքանէր զկենցաղս ար-  
» քայն: խակ Մեղացւոցն (որ թուին ըստ  
» Միխթ. Անեցւոյ Մարաց Ռէ կամ Ռա-  
» գաւ Երկրին տեալըն) եղեալ դաշ-  
» նադիր ընդ օտարսն՝ մերժեն զՊար-  
» սիկրն, և գրաւեն զիշխանութիւնն  
» որպէս ոմանք ասեն, Մկիւթացւոցն,  
» այլ որպէս վարկանիմ, Բակտրիա-  
» ցւոցն. (և սոքա) բառնան զյոլովից  
» ազանց տէրութիւնս մեծամեծ պա-  
» տերազմզք անզարմարար զամենեսին  
» սատակելով»: Նըրախօս վարդապետու  
երեխ ըսել թէ Ղազնեւան Պարսից հր-  
պատակքն անոնցմէ ապստամբելով յօգ-  
նութիւն կոչեցին զՄկիւթացիս, զորա-  
լաւ և էր ըսել Բակտրիացիս, վասն  
զի այն հին աշխարհին կողմերը՝ որ է  
Բահն՝ նախ տիրեցին այս Մկիւթացի ը-  
սուած թուրքքն՝ սերունդք Սէլջուկի  
զոր Սարչուկ կոչէր պատմիչս (Սարկա-  
ւագ): Ուրիշ մեր մէկ չափաբան պատ-  
միչ մ'այլ (Վահրամ Բարուն 'ի վերջ  
կոյս ԺԳ դարու) ասոնց համար կ'ա-  
ւանդէ.

« Ի հիւսիսոյ եղեն շարժեալ  
Ազգ՝ որ կոչմամբ թուրք անուանեալ.  
Ի քսան 'ի չորս ցեղս որոշեալ  
Զիշխանութիւն Տաճկաց առեալ.  
Թէպէտ յաղանդ նոցին գարձեալ.  
Եւ կայսերաց յաղթող գըտեալ» ևն են:

Այսական բաւական սեպենք, Հայ-  
կակ, այս նոր տիրապետող թուրք ցե-

զին՝ (Սէլճուգեանց) ծագման վրայ, ճանչնոլով մեր հին հեղինակաց ումանց կարծիքն այլ, և ցաւելով անոնց դրածին կորստեան կամ մեզի չհամանելուն վրայ. որով անոնց քով չգտածնիս՝ առօտարս և բնիկ պատմիչս արևելեան ազգաց փնտունք, մանաւանդ այն Նետողաց առաջին ասպատակին գլխաւորը և պատճառը, որ իմ այլ այսքան երկայն խօսիցս և բարբարոսարանութեանց պատճառ եղաւ: Ուսկից և որոյ առաջնորդութեամբ եկած էին անոնք՝ ի տունն Սենկբերիմայ ՚ի Վասպուրական երկիր, այսպէս կանուխ (յամին 1019), մինչդեռ ուրիշ և ոչ մէկ արևմբեան Ասիոյ կողմ լսուած էր Սէլճուգեանց անունն և գործն :

Սէլճուգայ թոռներն զիհունէն ասդին անցած տիրապետելով՝ կամաց կամաց սկսան դէպ ՚ի հարաւ յառաջել, և Ղազնեւեան Մահմուտի բուն սահմանաց՝ այսինքն խորասանի մօտենալ, բայց գեռ ակնածելով անկէ, որ կամ իրենց բարերարն էր կամ կրնար զօրատր թշնամի ըլլալ. սակայն աշխարհակալութենէ աւելի էր իրենց աւարառութեան փափագն, և սա աւելի զըրգը ուղուէր՝ լսելով արևմտեան աշխարհաց հարստութիւնը. զոր և ցանկութեամբ քննելով հեռուէն՝ ինչպէս ՚ի բարձրէն որսը կու դիտէ բազէն, յանկարծ Նետողաց տոհմապետքագէանուն Զագըրպէկն այլ թեւերը թօթափելով, հետը իր թուլքերէն զատ դունդ մ' այլ թիւրքմէն առած, կապարճն ուսերուն վրայ ցըցած, աղեղն ՚ի ձեռին, նետերն առջենէն թուցընելով, կտրեց անցաւ խորասանէն յերկիրն Մարաց, անկէ այլ յԱտրը պատահան և ՚ի Հայս: Մինչև ուր երթալն յայտնի չէ. բայց հասած կոխած է ինչուան Յունաց ինքնակալութեան արևելեան սահմանը, որ այն ատեն Հայաստանի մասն էր. և յանկարծահաս մրրկի մը պէս կարկտալով կոխած տեղը՝ կրցածը կորզեց խլեց, դիմացը կեցողները զարկաւ, ինչուան շատ բերդեր այլ անզգոյշ գտնելով՝ նուաճեց. և շրջան մ' առնելով նոյն աւարա-

ռութեամբ և աւերածութեամբ՝ դարձաւ յետս իր տեղը. և թէպէտ Մահմուտ սուլտանն լսելով անոր իր երկրէն անցնիլը՝ գժարեր և պատուիրեր էր որ ՚ի դարձին բռնեն դիազէն, բայց այն խորամանկն ծպտելով օտար փետուրներով՝ (վաճառականի զգեստով), անցաւ Մահմուտի սահմաններէն և հասաւ առ եղբայր իւր Ճօղրուլ ՚ի Պուխարա:

Ահա անշուշտ այս աւարառութեան պէիս ասպատակութեան դարձին ատենն էր՝ անցեալ օր քեզի պատմած գէպքս Վասպուրականի մէջ յ' առաջին մուտն Նետողաց՝ ՚ի Հայս. որոյ ճիրաններէն փախաւ հնացեալ Արծուին Ասուր-Հայոց (Սենկբերիմն Արծուունի). և աղէկ ժամուն աճապարեց. վասն զինոյն տարին (1021) Զագըրայ եղբայրն անուանին Ցուղրիլ այլ արշաւանք մ' ըրաւ ՚ի Հայս, մինչև ՚ի կենդրոն Այրարատեան աշխարհին՝ ՚ի Դուին. թէ և ինքն ալ եղբօրը պէս շուտ դարձաւ, և թերևս անկէ աւելի ծեծուած. վասն զի Բագրատունեաց սպարապետն՝ քաջն Վասակ Գահլաւունի (Հայր Գրիգորի Մագիստրոսի) հսկայ գորավարի մը հետըմբշամարտելով՝ յաղթեց, սպաննեց, ցրուեց բանակը. ինքն ալ յետ յաղթութեանն դարանակալի մը ձեռօք ըսպանուած՝ նահատակ սեպուեցաւ. Պատմիչն՝ Մ. Ուռհայեցի՝ այս ասպատակոզքս ոչ Սէլճուգեան թուրք՝ այլ Դելմիկ (Տիլէմ) կ' անուանէ. այսինքն այն ժողովուրդն՝ որ կազրից ծովուն արևմրտեան հարաւային եղերքը բնակէր՝ մօտ ՚ի Գիլան, սահմանակից հին կազրից Հայոց կամ Փայտակարան աշխարհի, և որ յիրաւի առանձին թագաւորութիւն կանգնեց Ժարուն ներկայից տէրութեան երկպառակութեան ատենն. սակայն Անւոյ մօտ Մարմաշէն վանաց եկեղեցւոյ գեղեցիկ արձանագրութեանց մէջ՝ Վահրամ եղբայր Վասակայ կ' ըսէ ասոր համար «նահատակեցաւ ՚ի թուրքաց պատերազմի »:

Այս գիպուածէս ետև 20 տարւոյ

շափ Թուրք.ք քաշուեցան յարևմտից , և զարևելք ապահովեցին իրենց , վերցնելով Ղաղնեւեանց տէրութիւնը և ուրիշ մանր թագաւորներ . Տուղրիլ անուանեցաւ սուլտան (1038) , յետ մահու եղբօրն՝ Զագրրայ , և ամիրապետէն այլ առաւ պատիւ ու հաստատութիւն իշխանութեանն . ապա համարձակ դիմեց յարևմտւս , և աւելի համարձակ ու շատ անգամ 'ի Հայս , ուր Բագրատունեաց տէրութիւնն այլ դադրեր էր . Քան տարրուան միջոց (1044–1063) գրեթէ ամեն տարի մեր աշխարհին մէկ մէկ կամ նոյն կողմերը ասպատակեցին Թուրք.ք , և ահա անոնց ըրածն՝ լսելու շաբաթ արժանի՝ ողբաբանէ Լաստիվերտին , մաս մ'այլ Մատթ.Ռւոհայեցի զորս կրնաս աչքէ անցնել՝ եթէ սիրես՝ դու այլ Հայկակ , արեան ու կրակի վրայ արցունք թափել , մանաւանդ եթէ Արիստակիսի հետ հանդիպիս 'ի Վաղարշաւան (1044) , յԱրդնի և 'ի Թիվում (1046) , 'ի Բասեն (1048–1050) , յԱրծն (1049) , 'ի Կարս (1053) , 'ի Հաղպ (1055) , յՈկոմի (1056) , 'ի Բերկրի և յԱրծէշ (1054) , 'ի Դ.Հայս և Ցայս (1054–1057) 'ի Միջագետս Հայոց (1057) , 'ի Կամախ և Մելտենի (1058) , 'ի Սերաստիա (1060) , 'ի Պաղին և Թիվում (1063) . և այլն և այլն . կրնաս երթեմն այլ սրբել աչքերդ տեսնելով ամուր քաղաքաց (Անույ , Կարնոյ և Մանազկերտի) ընդդիմանալն Թուրքաց , ևս առաւել լեռնորդ Ասանեցոց արիաբար կրուեն 'ի Ցարօն և անկից հալածելն զթշնամին (1058) . սակայն այլ աւելի պիտի դառնացընեն գրեղ գործք Տուղրիլի եղբօրորդւոյն և յաջորդին , այն անեղ առիւ Տուն (Էլփ–Արսլան) որ ութի ինն տարրուան մէջ (1064–73) թերևս հօրեղբօրը 20 կամ 30 տարրուան մէջ ըրածները գերազանցեց արաշար : Անի՛ չքնաղագեղ քաղաքն քաղաքը քաղաքաց Հայոց 'իրեն անճար սպանդ սրախողիսուղ եղաւ՝ ըստ Պատմին . ոչ Մանազկերտ՝ որ իրեն քսան տարի առաջ դիմացեր էր երկար պաշարման և Ցուղրիլի ամեն բոնաքար բարաններուն , կրցաւ Ալփարալանայ

դէմ կենալ , և ոչ Հայոց և Յունաց միաբանեալ գունդքն՝ անոր աշխարհաւեր բանակին դէմ . Դիոժեն կայսրն իրեն հինն Վաղերիանոս 'ի Շապհոյ՝ բռնուեցաւ որս ընկաւ ճիրանաց առիւծանուն Սէլչուկին , որ մոնչելով չորս կողմ.յարձակէր և աշխարհիս աւերը փութացընէր , եթէ իր անկարծ և չարաշար մահն այլ չփութացը (1072) , մանաւանդ անկէ ետքը իր որդւոյն Մէլիք Շահին խաղաղասէր թագաւորութիւնն (1072–1092) . վասն զի սա թէ և հօրը փափագը կատարեց՝ աշխարհակալելով մինչեցեղը ովկիանու , (այսինքն Միջներկրական ծովուն Ասորւոյ) , և միսեց հոն իր արեամբ կրակած սուրբ , սակայն դարձուց 'ի պատեան , և բռնաբար նուաճելոց՝ Հայրաբար տիրապետեց :

Այս Ալփ–Արսլանայ գործոց յարմարի կամ յարմարեալ է Ներախսեան ըստած գուշակութիւնն , որ և թուականաւ այլ ըսէ թէ « Յարիցեն ազգն այն » Նետողաց . . . իրեն ընուցու 700 ամաց « Ժամանակ (յետ մահուան Ա. Ներախ « սի ) . . . յարևելից աշխարհէն բուռն « Կազմութեամբ միր և քաջառն և ձիոյ , » սուսեր թեւաւոր ընդ մէջ ածեալ . . . : » Եւ նոքա բարկութեամբ և ապակա « նութեամբ աւերեսցեն զերկիր լրիւ » իւրով և սանձահարեսցեն զամենայն « զարևելքը և զհիւսիսի և զհարաւ և զա « ըսմուտք , մինչեւ 'ի ծովն Յունաց , և » զգեղեցիկնաւահանդիստն . կոտորես « ցեն զհազարս և զրիւրս , և զաթոռս « թագաւորաց յերկիր կործանեսցեն . » և 'ի նոցանէ դողասցեն ամենայն եր « կիր . զի 'ի Ցեառնէ ուղղին գնացք « նոցա 'ի վրէժիսնդրութիւն աշխարհի « ամբարշտելոց : Որպէս արծուփ երա « գաթե սլասցին ճեպով ընդ երկիր , » զի Տէր կոչեաց զնոսա յարևելից 'ի « ծագաց արեգականն . և քաղաք.ք մի « փակեսցին առաջի նոցա , և նետիւք « սպառեսցեն զերկիր . արբուցանեն « զնետս իւրեանց յարիւնս ամենայն « ազգաց հետաւորաց և մերձաւորաց : » իսկ նեղիչք քրիստոնէից ազգն արևելան լիադիրկը և պնդածիգը նետու-

» զաց ոչ քաղցիցեն և ոչ ծարաւեսցին  
 » և ոչ խորշակահարք եղեցին վասն  
 » բերկրելոյ սրտից իւրեանց և յաջու  
 » զութեան գործոց իւրեանց : Ա.Ա. առ.  
 » պատակեսցեն ընդ երկիր . և ընթառ  
 » ցեն որպէս կարապետք նեռինն » , և  
 » այն : Յայտնագոյն ևսնշանգը յիշէ կար-  
 » ծեցեալ գուշակութիւնն զժուդրիլ և  
 » զԱլիքարալան . « Բարկացեալ սրամնու-  
 » թեամբ Տէր . . . յարուցանէ յարեւ-  
 » լից կողմանէ . . . խորասանայ՝ թագա-  
 » ւոր այլադէմ և այլալեզու, անուն նու-  
 » րա Սուր և թեթև և զգաստ . . . ահե-  
 » զատես և զարմանալի, ժպիրհ և սէդ  
 » և լիրք և երկայնահեր, և այն . . . Եւ  
 » զկնի առաջին թագաւորին այնորիկ՝  
 » զոր յայտ արարաք, նստցի՝ ի նոյն ազ-  
 » գէն նորին անուամբ երկրորդ թագա-  
 » ւորն, 'ի նոյն յաթոռ յարեւելից՝ որ  
 » առաւելու չարեզք քան զառաջինն,  
 » սերմն ժանդ և որդի զառնութեան,  
 » նա բարձցէ զքահանայապետութեան  
 » և զթագաւորութեան աթոռ 'ի Հայ-  
 » աստան աշխարհէ . խոտորեսցի յաջ  
 » և յահեակ, և կերիցէ զմարմին բազ-  
 » կի իւրոյ, և ոչ յագեսցի . այլ ինքն  
 » իւր ազգատոհմին ոչ խնայեսցէ . և է  
 » գաղան սաստիկ և յափշտակող յայտ  
 » նեալ, և արագաթե արծուի օրինա-  
 » կեալ զնա . և ունելով զբաժակ դառ-  
 » նութեան՝ արբուացէ զամենայն հա-  
 » սակ մարդկան : Նա ըմբոնեսցէ զոմն  
 » 'ի թագաւորացն Յունաց 'ի սահմանս  
 » Հայոց մեծաւ յաղթութեամբ . և այն...  
 » Եւ յետ այս բոնակալաց . . . նստցի  
 » այր խաղաղարար . . . (Մէլիք շահ) և  
 » խնամակալու քրիստոնէից, բարե-  
 » համբաւ բարետեսակ » , և այն :

Այս կարկատեալ մարգարէութիւն-  
 ներէն աւելի աղդու են մեզի մեր ժամա-  
 նակակից պատմին զրոյցքն ողբաձայնկ. « Ո՞ր անդունդք անհնարինք քան զթուր  
 » քաստան կամ զեղերս երկրի խորա-  
 » գոյն է՝ յորս մեր գերիքն հեռացեալ  
 » կորեան » . . . Ուրիշ մերձաւոր մ'այլ  
 » ժամանակաւ կ'ըսէ . « Ազգք Թուրքաց  
 » տիրեցին աշխարհի 'ի ծովէն արևելից  
 » (կազրից) մինչև յծովն արևմտից, և

» ոչ մնաց 'ի նոյանէ մինչև ցքարան-  
 » ձաւ մի՛ որ ոչ մասնեաց Աստուած 'ի  
 » ձեռս նոցա » . և այն : Ահա այս ատեն  
 » նետողաց նետերէն փախչելով բազմու-  
 » թիւնք Հայոցիրք յաւիտենական մնաս  
 » բարով մը ըսին հայրենեաց և անոր  
 » սահմանաց, և հեռացան մինչև 'ի միջա-  
 » վայրս Եւրոպիոյ՝ 'ի Լեհաստան, և այն :  
 » Յետ մահուան Մէլիք շահի՛ Մէլչուկեանց  
 » իշխանութիւնն իրեք չորս ճիւղ բաժ-  
 » նուեցաւ . զլիսաւորն էր սուլտանն Պար-  
 » սից՝ որ և տիրէր մեր աշխարհաց . Երկ-  
 » րորդն՝ Մէլչուկեանց նախ բնակած տե-  
 » ղերուն վրայ կ'իշխէր, այսինքն խուա-  
 » րէզմի . Երրորդն եղաւ սուլտան Իկոնիո-  
 » նի, այսինքն Ղօնեայ, որ ամենէն աւե-  
 » լի երկարատե եղաւ, գրեթէ մինչև 'ի  
 » վերջ ժդ դարու, և զրակից ըլլալով  
 » Ռուրինեան թագաւորաց մերոց՝ իրա-  
 » րու հետ շատ գործ ունեցան . չորրորդն՝  
 » սուլտանէ Հալէպի և Դամասկոսի, որոց  
 » 'ի կէս ժդ դարու (1260) տիրեցին ԹՎ-  
 » ԹԱՐԹ :

Այս ազգս (թագթար) յետին եղաւ  
 » սկիւթական ասպատակողաց, միանգա-  
 » մայն և ամենէն հեռու համնող, ամենէն  
 » հզօր կամ վայրազգ, կամ լաւ ևս ըսել՝ ամե-  
 » նէն աւելի նետող . այնպէս որ մերայինք  
 » սոր սեփականած են այդ կոչումը՝ Ազգն  
 » նետողաց . և Ներսիսեան գուշակու-  
 » թիւնք ասոնց վրայ խօսին յետ Մէլ-  
 » չուկեանց : Թուրքաց ցեղակից և 'ի թուր-  
 » քաստանէ ելեալ գէպ 'ի յարեւելս ծա-  
 » ւալեալ և շատ տոհմեր բաժնուած էին  
 » թագթարք, որոց առաջին նահապեան  
 » կամ գաղթականի առաջնորդն՝ անծա-  
 » նօթ է . բազմաթիւ տոհմից զլիսաւոր-  
 » ներէն մէկն էր Մուշալ (Մոնկոլ ըստ  
 » Եւրոպացոց) որ և հին Պարթեաց պէս  
 » վարատական կամ փախստեայ նշա-  
 » նակէր . ուսկից յառաջ եկաւ աշխար-  
 » հիս ամենէն աւերածու և բոնակալաց  
 » մէկն կամ առաջինն՝ ձինկիզիւան, ո-  
 » րոյ արիւնագիծ պատմութիւնն մեր այ-  
 » սօրուան տեսարանէն դուրս մնայ . Ժի-  
 » զարուն վերջերը իշխանութիւնը ձեռք  
 » առած՝ սկսաւ աշխարհակալութեան 'ի  
 » չորս կողմն, և տիրեց 'ի Զինաց մինչև

՚ի կիւլիկիս . ՚ի հիւսիսոյ արևմտից այլ մինչև ՚ի Դըիմ , մինչև ՚ի Ռուպը և ՚ի Լեհս , իր նմանաբարոյ որդուզք և թռուամբք . նուածելով և ջնջելով Պարսից և Խուարէզմի Սէլյուկները , որոց յետինն էր ձէլալէտտին սուլտան . ասոր բաժինը ժառանգեց Հուլաղու խան , (1258) , թուն ձինկիզայ . որոյ սերունդքն պայազատեցին տիրելով մեր աշխարհին և արևմտից՝ դար մը ժամանակ . յետ որոց արիւնկզակն Լէնկթիմուր գլուխ եղաւ նոր պայազատութեան , որ տեսց մինչև ցվերջ ժե դարու . յորում (1499) Շահ Խամայէլ Սէֆեան՝ Պարսից նոր թագաւորութիւնը հաստատեց և Նետողաց բռնութիւնը վերջացաւ :

Բայց բուն անոնց տէրութեան յաջորդ եղաւ դարձեալ թուրք տոհմ մը որ մինչև ցարդ այլ մնայ մեծատարած իշխանութեամբ , բայց և քաղաքական օրինք : Այս թուրք տոհմն ծագեալ ՚ի հզօր Ուղուղ թուրքաց , զոր նախ տեսանք , կոչէր Գայիխանէլլը , թերևս յանուն Գայի խանի որդւոյ թուրք խանի՝ թուրին թարեթի նահապետի , ըստ աւանդութեան նոցա . այս Գայի խանէն յորդւոց յորդիս ցեղաբանելով՝ յիսներորդ կ'ըլլայ Սիւլէյման շահ , որ կուտիրէր իր տոհմին՝ ՚ի Մահան քաղաքի ՚ի կողմանս Մէրուայ , ուր եկեր էին իր նախահարքն Սէլյուզայ հետ՝ իրենց խոր աշխարհէն : Երբ ձինկիզխան հալածեց զձէլալէտտին՝ Սիւլէյմաննախապատիւ եղաւ Խուարէզմի կողմի իշխանաց մէջ . բայց թաթարաց ոտնակոխ չըլլալու համար՝ փախաւ չուեց բազմութեամբ հաւանելոցն , եկաւ նախ բնակեցաւ . յաշխարհն մեր ՚ի Հայաստան , ՚ի կողմանս Խլաթայ , ուր շատ դարերէ ՚ի վեր մահմէտական տէրութիւն մը հաստատուած էր . բայց թաթարաց վախուն անկէց ալ հեռացաւ անցաւ յարեւմուեան Հայս , յիշխանութիւն իկոնիոնի Սէլյուկեան սուլտանին՝ Ալայէտտին Քէյքապատայ , որ մարդասիրապէս ընդունեցաւ և տեղ տուաւ անոր ՚ի սահմանս մեր հին Եկեղեաց դաւառին (Երզնկա) . անկից եկաւ ՚ի Զահան դաւառ (Մարաշ) : Յետ մա-

հուան նորա՝ իր կրդողուուլ որդին նորէն դարձաւ ՚ի Մեծ Հայս՝ ՚ի Բասեն գաւառ , յետոյ դարձեալ ՚ի Փոքր Հայս և ՚ի Փ. Ասիա . ուսկից իր որդին Օսման նախապետ համանուն մեծիշխան թագաւորաց , և իր որդիքն՝ չորս կողմի տիրելով , և աւելի դէպ յարեւմուտք երթալով՝ յետ դարու կիսոյ հասան առին և զրին իրենց աշխարհակալ իշխանութեան աթոռութիւն ամենէն հզօր մեծ և գեղեցիկ քաղաքին մէջ ՚ի կուտանդնուպօլիս , զոր և կոչեցին Ստամպոլ , ինչպէս զիտես , հանդերձ հետեւանքն : Հոս հին Աբարիսի նետն իր վազուց կորուսած կապարճը գտաւ , մըտաւ փտաւ . և պայազատքն պայազատաց Նետողաց՝ նոր զէնքերով իրենց ահը և զօրութիւնը հին աշխարհիս իրեք մասանց մէջ այլ տարածելով , (ուր մինչև հիմայ այլ տիրեն) , երբ աշխարհակալութեանց եզերքն սահմանեցան , ՚ի քաղաքական կրթութիւնս դարձուցին իրենց ընթագքը՝ ըստ եւրոպական հրահանգեալ ազգաց , և դեռ այս անծայր ասպարիզին մէջ կշռեն քայլերնին : Որոց ևս քան զես յառաջելու՝ ոչ միայն մենք մաղթելու պարտական եմք , այլ կարծեմ թէ և շատ ազգք և տէրութիւնք , չըսեմ թէ բոլոր աշխարհս , որոյ խաղաղութեան և խոռվութեան մէկ բաղդաշարք քուէ մ'այլ այս սկիւթական թուրք տոհմին տուած է Աստուած ՚ի հնուց մինչև հիմայ , և դուցէ մինչև ՚ի հեռագոյն և յանձնանօթ երբս . ինչպէս ուրիշ մեծազօր քուէ մ'այլ անոնց հին դրակից և մեծ մասին տիրող սարմատական Ոտու տոհմին :